ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊՈՐՏԱԼԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-2.1.2.ա

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Ծրագրի նպատակն է ուժեղացնել կառավարության կարողությունները համարժեք խթանների միջոցով՝ ընկերություններին արտահանման խթանման և որակի ենթակառուցվածքների ծառայությունների մատուցման ոլորտում:

Սույն հանձնարարականի նպատակն է աջակցել Հայաստանի զարգացման հիմնադրամին (ՀԶՀ) հայ արտահանողներին համարժեք և թարմ տեղեկություն մատուցելու գործում՝ Հայաստանից արտահանում կատարելու համար անհրաժեշտ մարտավարական և տեխնիկական պահանջներն արդյունավետ կարգավորելու նպատակով, ըստ գերակա ոլորտների, որոնք ամրագրված են 2011թ. հաստատված ՀՀ Արտահանմանն ուղղված արդյունաբերության քաղաքականության ռազմավարությունում:

Լրացուցիչ նպատակն է ներկայացնել հայկական արտադրանքը և ընկերությունները տեղական և արտասահմանյան ընկերություններին, որոնք հետաքրքրված են Հայաստանից արտահանումով:

Սույն հանձնարարականի շրջանակում նախատեսվում է հետևյալ ծառայությունների իրականացումը.

ա) «Ինչպես արտահանել Հայաստանից» ձեռնարկի մշակում

բ) Արտահանման կատալոգի մշակում

գ) Աշխատակազմի վերապատրաստում «Ինչպես արտահանել Հայաստանից» ձեռնարկի և Արտահանման կատալոգի կիրառման վերաբերյալ:

Հանձնարարականի տևողությունը շուրջ 5 ամիս է:

Ուստի Հայաստանի Զարգացման Հիմնադրամը և ՀՀ ֆինանսների նախարարության “Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը:

Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կհաստատեն, որ նրանք ունեն ծառայություններն իրականացնելու համար պահանջվող որակավորումը և համապատասխան փորձառությունը (ներկայացնելով մատուցված նմանատիպ ծառայությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ նշելով մատուցված ծառայությունների շրջանակը և նկարագիրը, իրականացման ժամկետները, վայրը և այլն):

Խորհրդատվական ընկերությունը պետք է համապատասխանի հետևյալ որակավորման պահանջներին և ունենա՝

- Նմանատիպ հետազոտությունների առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ
- Որակական հետազոտությունների իրականացման փորձ (որակական հետազոտական մեթոդների իրականացման փաստաթղթային հիմնավորում)
- Առնվազն 3 հաջողված նախագիծ իրականացված վերջին 5 տարիների ընթացքում:

Պահանջվում է փաստաթղթային հիմնավորում, ինչպես օրինակ ամփոփ հաշվետվությունների ամփոփագրեր և իր հետ պայմանագիր կնքած գերատեսչությունների անվանումները և այլն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել 2011թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների (Խորհրդատուների ուղեցույց) 1.9. պարբերությանը, որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների շրջանակներում սահմանված Բաժին II-ում ներկայացված «Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են ներկայացնել հետաքրքրվածության հայտեր՝ անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի) ստորեւ նշված հասցեով (անձամբ կամ փոստով կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. հուլիսի 22-ը, ժամը 18:00** :

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
Պրն Էդգար Ավետյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 1, 3-րդ հարկ, 314 սենյակ
Հեռ՝ (374-11) 91 05 81, 91 05 94
Էլ-փոստ՝ info@ffpmc.am